ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2024 թվականի N 243-Ն

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2023 թվականի ապրիլի 13-ի ՀՕ-145-Ն օրենքի 1-ին հոդվածի 2-3-րդ, 10-րդ հոդվածի 4-9-րդ և 11-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի ապրիլի 13-ի ՀՕ-146-Ն օրենքի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, դրանց դադարեցման պետական գրանցման համար անհրաժեշտ էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների, դրանց դադարեցման պետական գրանցման համար անհրաժեշտ էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կիրառված և գործող սահմանափակումների վերաբերյալ անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության ցանկն անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի առանձնացված բաժնում տեղադրման, ցանկի համընդհանուր հասանելիության ապահովման, դրա խմբագրման, սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինների կողմից յուրաքանչյուր եռամյակ իրենց կատարած աշխատանքների և խմբագրումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունն անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացնելու, ցանկի խմբագրման հնարավորությունն արգելափակելու, սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացրած՝ ցանկում գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների նկատմամբ սահմանափակումներ լրացնելու վերաբերյալ դիմում-բողոքների մասին հաղորդումը, դիմում-բողոքների լուծման արդյունքում կազմված սահմանափակումը դադարեցնելու կամ սահմանափակում կիրառելու մասին որոշումն անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացնելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների փոխանակման և էլեկտրոնային հարցումների իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 687-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլուխը և նույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածի 2-րդ գլուխը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 30-րդ օրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո եռամսյա ժամկետում համապատասխան մարմինները և պաշտոնատար անձինք սույն որոշմամբ հաստատ-

ված NN 1 և 2 հավելվածներով սահմանված փաստաթղթերը կարող են ներկայացնել թղթային կամ սույն որոշմամբ հաստատված NN 1 և 2 հավելվածներով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ